ԿԱՐԾԻՔ

Տաթևիկ Վազգենի Շահինյանի «Բանկային ծառայությունների զարգացման հեռանկարները Հայաստանի հանրապետությունում» թեմայով թեկնածուական ատենախոսության վերաբերյալ՝ ներկայացված Ը.00.03-«Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուիգիտական աստիճանի հայցման համար

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Բանկային ծառայությունների շուկայի արդի վիճակն ու դրա կառուցվածքային զարգացումը սահմանում են բանկային համակարգը որպես տնտեսության առանցքային օղակ, որն առաջատար դեր է խաղում երկրի տնտեսական ներուժի բարձրացման գործում:

Բանկային ծառայությունների տեսականու ընդլայնումը, համակարգում նորարարական տեխնոլոգիաների ներդրումն ու զարգացումը բանկային եկամուտների մեծացման կարևորագույն աղբյուրներից են:

Բանկային ծառայությունների կատարելագործման, ինչպես նաև նորարարական ծառայությունների ձևավորման ու ներդրման հարցերը բանկային գործունեությանը վերաբերող տեղական աղբյուրներում քիչ ուսումնասիրված ոլորտներից է, որն էլ պայմանավորել է թեմայի ընտրության արդիականությունն ու բանկային նոր ծառայությունների ու տեխնոլոգիաների զարգացման տեսական և գործնական խնդիրների համապարփակ հետազոտության անհրաժեշտությունը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Աշխատանքում հեղինակը նպատակ է դրել ուսումնասիրել ՀՀ բանկային ծառայությունների ու դրանց զարգացման հեռանկարները՝ ծառայությունների տեսականու ընդլայնման և դրանց ծախսատարության կրճատման համատեքստում:

Նշված նպատակին հասնելու համար կարևորվել են հետևյալ խնդիրները.

- Մասնագիտական գրականության, ինչպես նաև առկա վերլուծությունների հիման վրա պարզաբանել բանկային ծառայությունների տնտեսական բովանդակությունը, դրանց դերն ու նշանակությունը ՀՀ տնտեսության մեջ:
- ՀՀ բանկային ոլորտի հիմնական ֆինանսական ցուցանիշների հետազոտության արդյունքում բացահայտել բանկերի կայունացմանն ուղղված ՀՀ ԿԲ ձեռնարկած միջոցառումների արդյունավետությունը:

- Բանկային ծառայությունների ձևավորման ու զարգացման միջազգային փորձի ուսումնասիրությունների հիման վրա քննարկել ՀՀ բանկային համակարգի բարեփոխման ուղիները:
- Առևտրային բանկերի ակտիվային ու պասիվային գործառնությունների էության քննարկման ու վերլուծությունների հիման վրա դիտարկել դրանց կատարելագործմանն ուղղված հնարավոր ուղիները:
- ՀՀ բանկային համակարգում առաջացող հիմնական ռիսկերի բացահայտման ու հետազոտությունների հիման վրա քննարկել ռիսկերի կառավարմանն ուղղված ՀՀ ԿԲ ռազմավարական մոտեցումները:
- ՀՀ բանկերի կողմից իրականացվող լիզինգային և ֆակտորինգային ծառայությունների ուսումնասիրությունների, ինչպես նաև մեր կողմից իրականացված սոցիոլոգիական հարցումների հիման վրա առաջարկել մատուցվող ծառայությունների կատարելագործման նոր մոտեցումներ,
- Ներկայացնել բլոկչեյն և բաց բանկինգ նորարարական տեխնոլոգիաների կիրառության առավելություններն ու հիմնավորել բանկային ծառայությունների կատարելագործման ու զարգացման գործում նորարարական տեխնոլոգիաների կիրառության անհրաժեշտությունը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունն ունի գիտագործնական ուղղվածություն: Ատենախոսության կառուցվածքը տրամաբանական հաջորդականությամբ տալիս է բարձրացված հարցերի տնտեսագիտական լուծումներ: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից և առաջարկություններից, օգտագործված գրականության ցանկից: Ըստ բաժինների աշխատանքում ներկայացվել է.

Ներածությունում հիմնավորված է ատենախոսության թեմայի արդիականությունը, ձևակերպվել են նպատակը և խնդիրները, հստակեցվում են ատենախոսության օբյեկտը և առարկան, ներկայացված են հիմնական արդյունքները և գիտական նորույթը, դրանց տեսական ու գործնական նշանակությունը, ինչպես նաև արդյունքների հրապարակումը, ատենախոսության կառուցվածքը և ծավալը:

Ատենախոսության առաջին՝ «Բանկային ծառայությունների տնտեսական բովանդակությունը և կազմակերպման ձևերը» գլխում, հեղինակը ներկայացրել է բանկային

ծառայությունների տնտեսական բովանդակությունը, վերլուծված են ՀՀ բանկային ոլորտը բնութագրող հիմնական ֆինանսական ցուցանիշները, ինչպես նաև ուսումնասիրված է բանկային ծառայությունների առաջացման ու զարգացման միջազգային փորձը: Առաջին գլխում ներկայացված է նաև «բանկային ծառայություն», «բանկային գործառնություն» և «բանկային արտադրանք» հասկացությունների տարբեր հեղինակների մոտեցումները, իսկ այնուհետև ձևավորվել է սեփականը:

Ատենախոսության երկրորդ՝ «ՀՀ բանկային համակարգում մատուցվող ծառայությունների քննական վերլուծություն» գլխում, ուսումնասիրվել են առևտրային բանկերի ակտիվային ու պասիվային գործառնությունները, վերլուծվել են լիզինգային և ֆակտորինգային ծառայություններն ու դրանց զարգացման հնարավորությունները, ինչպես նաև բացահայտվել են ՀՀ բանկային համակարգում առկա ռիսկերն ու դրանց արդյունավետ կառավարման մեխանիզմները:

Ատենախոսության երրորդ՝ «ՀՀ բանկային ծառայությունների զարգացման հեռանկարները դրանց ծախսատարության նվազեցման համատեքստում» գլխում, քննարկվել են ՀՀ առևտրային բանկերի կողմից տրամադրվող ծառայությունների ծախսատարության ու եկամտաբերության խնդիրները, ինչպես նաև մշակվել է բանկային ծառայությունների ինքնարժեքի հաշվարկման նոր մոտեցում: Ուսումնասիրվել է նաև նորարարական տեխնոլոգիաների կիրառմամբ բանկային ծառայությունների ծախսատարության նվազեցման հնարավորությունները:

Ատենախոսության «**Եզրակացություններ և առաջարկություններ**» բաժնում ամփոփվել են հետազոտությունից բխող եզրակացություններն ու առաջարկությունները, որոնք ունեն ինչպես տեսական, այնպես էլ ընդգծված գործնական նշանակություն:

Հետազոտության արդյունքների հավաստիությունը պայմանավորված է նրանով, որ աշխատանքում կատարված վերլուծությունները, մշակված մոտեցումները հիմնված են դիտարկվող հիմնահարցն ուսումնասիրող հայ և օտարազգի հեղինակավոր մասնագետների աշխատությունների վրա: Ատենախոսության համար տեղեկատվական հիմք են ծառայել մասնագիտական պարբերականներում հրապարակված հոդվածները, թեմային առնչվող հայալեզու, ռուսալեզու և անգլալեզու մասնագիտական

գրականությունը, միջազգային տարբեր կազմակերպությունների զեկույցները, ՀՀ ՎԿ հրապարակումները, ՀՀ օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերը, ինտերնետային կայքերում տեղ գտած՝ թեմային առնչվող տեղեկատվությունը, սեփական հետազոտության արդյունքները: Հետազոտության հիմնական տեսամեթոդական հիմք է հանդիսացել տեսական և գործնական տեղեկատվության համակարգային վերլուծությունը՝ վերջնական նպատակ հետապնդելով մշակելու նոր մեթոդական մոտեցումներ:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Աշխատանքում ստացված արդյունքները չեն կրկնում այլ հետազոտողների կողմից կատարած հետազոտությունների արդյունքները:

Հետազոտությունների ու վերլուծությունների հիմնական արդյունքներն ու գիտական նորույթները հետևյալներն են.

- ՀՀ 17 առևտրային բանկերում, ինչպես նաև 384 ձեռնարկություններում մեր կողմից իրականացված սոցիոլոգիական հարցումների հիման վրա ուսումնասիրվել են լիզինգի, մասնավորապես՝ գործառնական լիզինգի պահանջարկի առկայությունը շուկայում, բացահայտվել են դրա ներդրման համար շուկայում առկա բացերը և ստացված արդյունքների հիման վրա առաջարկվել են ոլորտի կարգավորման ուղիներ:
- Ծառայությունների ծախսատարության և դրանցից ստացվող եկամտաբերության համեմատական վերլուծության հիման վրա վեր են հանվել ՀՀ բանկային ոլորտում ակտիվների մեծությամբ առաջատար երեք բանկերում առկա շեղումները, և մշակվել է դրանց շտկան համար բանկային ծառայությունների ինքնարժեքի հաշվարկման նոր մոտեցում:
- Բանկային ծառայությունների մատուցման համաշխարհային փորձի համակողմանի ուսումնասիրման հիման վրա հիմնավորվել է նորարարական տեխնոլոգիաների ներդրման նպատակահարմարությունը ՀՀ բանկերի կողմից մատուցվող ծառայությունների ծախսատարության նվազեցման և եկամտաբերության աճի համատեքստում:

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հետազոտության վերաբերյալ հիմնական դիտողություններից կարելի է առանձնացնել.

1. Ատենախոսությունը կշահեր, եթե հեղինակը 2-րդ գլխի երկրորդ ենթագլխում ՀՀ բանկային համակարգում առաջացող հիմնական ռիսկերի մասին խոսելիս առավել մանրակրկիտ ներկայացներ իր կողմից առաջարկվող տեխնոլոգիաների ներդրման հետևանքով առաջացող ռիսկերը, ինչպես նաև ՀՀ բանկերի կողմից դրանց դիմակայելու գործիքակազմերը:
2. Ատենախոսության մեջ հեղինակը ներկայացրել է 384 կազմակերպությունից ստացված սոցիոլոգիական հարցման արդյունքներ՝ ուղղված լիզինգային գործառնությունների պահանջարկի բացահայտմանը: Այս առումով աշխատանքի կշիռն ավելի կբարձրանար, եթե ներառված լիներ հեղինակի համեմատական վերլուծությունը բանկերի կողմից առաջարկվող լիզինգին փոխարինող վարկատեսակների և լիզինգային կազմակերպությունների կողմից առաջարկվող ծառայությունների պայմանների միջև:
3. Աշխատանքը հարուստ է վերլուծություններով և եզրակացություններով, սակայն կարծում ենք, որ այն առավել հարուստ կլիներ, եթե ներկայացված վերլուծությունները ներառեին առավել լայն ժամանակահատված:
4. Ատենախոսության 3.1 ենթագլխում հեղինակն անդրադարձել է անկանխիկ վճարումներին, նշել է միջազգային վճարային համակարգերի ամենամեծ NFC նախագծերը, աշխարհում, ինչպես նաև ՀՀ-ում դրանց գործարկման պատմությունը: Այս առումով աշխատանքն առավել հարուստ կլիներ, եթե հեղինակը նաև ներկայացներ ՀՀ բանկերի կողմից մատուցվող Apple Pay ծառայությանը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Նշված դիտողությունները չեն նսեմացնում հետազոտության արդյունքների գիտագործնական նշանակությունը: Տ.Վ. Շահինյանի թեկնածուական ատենախոսությունը ինքնուրույն և ամբողջական հետազոտություն է, որում դրված նպատակը և խնդիրների

լուծումը ՀՀ համար կարևոր են ու արդիական:

Հետազոտության հիմնական արդյունքները հրատարակվել են 14 գիտական հոդվածներում: Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է ուսումնասիրության բովանդակությանը և արտացոլում է աշխատանքի կարևոր դրույթներն ու արդյունքները: Ատենախոսը դրսևորել է բարձր մասնագիտական գիտելիքներ և վերլուծական հմտություններ, ինչի մասին վկայում է ինչպես ատենախոսությունը, այնպես էլ դրանում ստացված արդյունքները: Հեղինակի կողմից մշակված առաջարկությունները և կատարված եզրահանգումները կարող են կիրառվել ՀՀ առևտրային բանկերի կողմից նոր բանկային ծառայությունների ու տեխնոլոգիաների մշակման ու ներդրման գործում:

Այսպիսով, Տաթևիկ Վազգենի Շահինյանի «Բանկային ծառայությունների զարգացման հեռանկարները Հայաստանի հանրապետությունում» թեմայով թեկնածուական ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը՝ Ը.00.03 - «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ:

Պաշտոնական ընդդիմախոս,
Էվոկաբանկի վարչության նախագահի
առաջին տեղակալ,
տնտեսագիտության թեկնածու

Ա.Գ. Հակոբյան

Ա.Գ. Հակոբյանի ստորագրությունը
հաստատում եմ՝

Էվոկաբանկի մարդկային ռեսուրսների
կառավարման բաժնի պետ Տաթևիկ Ջանոյան

ՀՀ «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ
evocabank
ՍՈԿ ԲԱԺԻՆ
HRM DIVISION
16600
00001182
АРМЕНИЯ, «ЭВОКАБАНК» ЗАО
ARMENIA, "EVOCABANK" CJSC